

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

- ✓ 2014 թ. դեկտեմբերի 3-6-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական վարչության տնօրենի տեղակալ Ե. Բորուշկոն և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության վարչության արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության բաժնի պետ Վ. Մոսկալենկոն Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային Միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցության նպատակով վիճակագրության ոլորտում կազմակերպական և մեթոդաբանական հարցերով հանդիպումներ և խորհրդատվություններ իրականացնելու նպատակով,
- ✓ 2014 թ. դեկտեմբերի 1-12-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ԱՄՆ-ի Հաշվառումների բյուրոյի փորձագետներ Դանիել Գուդկլինդը և Ֆեստուս Ուկվուանին «Ժողովրդագրական վերլուծություններ» խորագրով սեմինար անցկացնելու նպատակով,
- ✓ 2014 թ. դեկտեմբերի 16-17-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժնի սոցիալական և ժողովրդագրական վիճակագրության հատվածի ղեկավար Անդրեա Վիկատը, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի փորձագետ Լորեն Պանդոլֆելլին, Շվեդիայի վիճակագրության փորձագետներ Մարիա Հականսսոնը և Ֆրեդերիկ Անդերսսոնը «Հայաստանում ձեռնարկատիրական վիճակագրության զարգացումն ըստ գենդերի» խորագրով սեմինար անցկացնելու նպատակով: